ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Խաղաղության փողոց 3 հասցեում քաղաքային այգու կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱԲՀ- ԲՄԱՇՁԲ-26/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Աբովյան

22/01/2026թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա. Զոբանյան (ԳՊ/ԳԱՊ)
Անդամներ՝ Վ. Վարյան (ԳՊ/ԲԱ), Լ. Իսահակյան (ԳՊ/ԲԱ), Լ. Շառաջյան (ԳՊ/ԳԱ), Ա. Առուշանյան (ԳՊ/ԳԱ)
Քարտուղար՝ Գ. Միսակյան (ԳՊ/ՄՀՄ)

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
<u>Ա. Զոբանյան</u>

Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Խաղաղության փողոց 3 հասցեում քաղաքային այգու կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱԲՀ-ԲՄԱՇՁԲ-26/14» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հրավերի վերաբերյալ 2026թ. հունվարի 20-ին ստացվել է հետևյալ պարզաբանման հարցումը.

1. Հողախառնուրդ:

Խնդրում ենք ճշտել հողախառնուրդի բաղադրիչների ճշգրիտ համամասնությունները: Նախահաշվում նշված է բուսահող 3/4, սորֆ – 2/4, խարամ – 1/4: Նշված բաժինների հանրագումարը գերազանցում է մեկ միավորը, ուստի խնդրում ենք հաստատել ճիշտ հարաբերակցությունը կամ ներկայացնել դրանց կիրառման մեթոդաբանության պարզաբանումը:

2. 1 517 մ³ ծավալ:

Խնդրում ենք ճշտել՝ արդյոք նշված հողի ծավալը (1 517 մ³) առկա է օբյեկտում, և արդյոք տվյալ գիրքը պետք է հասկանալ որպես տորֆի ավելացում առկա բուսահողին (օրինակ՝ 1/2 տորֆ՝ 3/4 բուսահողի նկատմամբ), թե հախատեսվում է ամբողջական հողախառնուրդի պատրաստում՝ բոլոր բաղադրիչների մատակարարմամբ:

3. Հողի մատակարարման աղբյուր:

Այն դեպքում, եթե նշված 1 517 մ³ հողի ծավալը առկա չի, օբյեկտում, խնդրում ենք նշել հողի մատակարարման նախատեսվող աղբյուրը, ինչպես նաև հստատել ավելի ծավալի ձեռքբերման և տեղափոխման հնարավորությունը նախահաշվով նախատեսված գներով:

Խնդրում ենք տրամադրել գրավոր պարզաբանումներ՝ աշխատանքների ծավալների, նյութերի կազմի և մատակարարման պայմանների ճիշտ ընկալումն ապահովելու նպատակով:

Գնահատող հանձնաժողովի կողմից, ուսումնասիրելով պարզաբանման հարցումը, որոշվեց տալ հետևյալ պարզաբանման պատասխանը՝

Հարգելի մասնակից, ի պատասխան Ձեր ԱԲՀ-ԲՄԱՇՁԲ-26/14 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 20.01.2026 թ-ին արված հարցման՝ ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումները.

1. Հողախառնուրդ

Հիմք ընդունել հողախառնուրդի բաղադրության հետևյալ համամասնությունը՝ 2/4 բուսահող, 1/4 տորֆ, 1/4 հրաբխային խարամ: Նախագծում առկա է տեխնիկական վրիպակ:

2. 1517 խմ ծավալ

Նախագծային տարածքում առկա հողային շերտի հնարավոր օգտագործում, հարստացում՝ տորֆով ու հրաբխային խարամով:

3. Հողի մատակարարման աղբյուր

Նախագծում սահմանված չի հավելյալ հողի մատակարարում: Նախահաշվային փաստաթղթերում գնագոյացումը կատարվել է անհրաժեշտ գործակիցների կիրառմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝		*Ա. Զոբանյան*

Անդամներ՝		Վ. Վարյան
		Լ. Իսահակյան
		Լ. Շառաջյան
		Ա. Առուշանյան
Համակարգող՝		Գ. Միսակյան